

աստուծոյ՝ տուողին յաղթութեան, եւ շարունակեցին իրենց ընթացքը, որպէսզի ժամանակ չի տան թշնամուոյն սթափուելու:

Եւ իրօք յունաց փախստական գորքերը իրենց բանակը գնացին պարտութեան լուրը տանելու, ահով եւ վախով լցուցին ամենուն սիրտը, ոչ միայն հայ խումբին զօրութիւնն անպարտելի էր, այլ նաեւ ամեն մէկուն հասակն ահագին, ոչ միայն իրենց երեսին գոյնը ճերմակ չէր, այլ նաեւ սեւ էր սատանայի երեսի պէս, եւ որ մեծն էր ոչ թէ հարիւր, երկու հարիւր էր իրենց թիւը, այլ ահագին բազմութիւն էին: Այս չափազանց լուրը զօրավարին եւ բոլոր զօրաց երբ հաղորդեցին փախստականք, վհատութիւնը տիրեց, եւ հրաման եղաւ շուտ մը բանակը վերցնելու եւ Կարնոյ ճամփան բռնելու. եւ այնպիսի արագութեամբ շարժեցան յոյնք, որ հագիւ թէ կարելորդ տանելով՝ շատ աւար թողին Արամանեակի առջեւ, հայք քանի մը յետամնաց կալանաւորեցին եւ Գուրգէն հրամայեց արձակել:

Բերդականք չի կարենալով մեկնել թշնամուոյն փախուստը եւ նոր եկող փոքրիկ խումբը, կը զարմանային, եւ երբ մարդ հասել ու եղածն իմանալ կը մտածէին, Գուրգէն իւր թիկնապահներէն մէկը ղրկեց բերդը իմացնելու Իշխանիկին բոլոր պատահարը, որ մեծ ուրախութեամբ իջաւ եկաւ եւ հրաւիրեց ներս իւր քաջ ազգակիցքն ու աղատարարքը: Գիշերն սկսել էր վրայ հասնիլ, երբ ձիոց եւ մարդկանց ոտքերու դոփիւնը հնչեց բերդին կամարներուն տակ, եւ Աշոտ ուրախ-զուարթ կը գոչէր.

– Ես ձեզի չըսի՞, որ այս գիշեր Արամանեակի իշխանին հիւրն ենք մենք: Ահա իմ գուշակութիւնս կատարեցաւ:

– Ո՞վ է այս երիտասարդ իշխանը, – հարցուց Իշխանիկ Գուրգէնին:

– Մեր փոքր բանակին մեծ ուրախութիւնն է, – պատասխանեց Գուրգէն: